



# Փ Ա Ր Ո Մ *Paros*

ISSUE 64 – NOVEMBER / ԹԻԻ 64 – ՆՈՅԵՄԲԵՐ 2022

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND



## Jubilee Celebrations

**FEATURE NEWS**

On Sunday 20 November dignitaries and community guests gathered at the Miramare Gardens reception venue to honour the 10<sup>th</sup> anniversary of Episcopal Ordination and Primateship in the Diocese of Austrlia of His Eminence Archbishop Haigazoun Najarian.

Read all the news starting page on 7 in the Armenian and English on page 29.

Յոյրելենական Տօնակատարութիւն Կիրակի Նոյեմբերին բարձրաստիճան պաշտօնատարներ եւ համայնքի հիւրեր Միրամար Կարտընզի մէջ տօնեցին Բարձրաշնորհ Տէր Հայկագուն Արքեպիսկոպոս Նաճարեանի եպիսկոպոսական ձեռնադրութեան եւ թեմիս Առաջնորդութեան տասներորդ տարեդարձը: Մանրամասնութիւնները էջ 7:

## ԹԵՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

**Շբ., 5 Նոյեմբեր** – Բարձրաշնորհ Տեր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան Առաջնորդ Սրբազան հայրը, մեկ շաբաթ Նոր Զելանտա այցելութենէն ետք Սիտնի վերադարձաւ 5 Նոյեմբերին: Օքլանտ քաղաքի փոքրաթիւ գաղութի անդամները եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ Ծխական Խորհուրդի անդամներուն համար նշանակալից էր այս այցելութիւնը եւ օրհնաբեր: Սրբազնութեան կ'ընկերակցէին թեմական խորհուրդի անդամներ եւ հիւրեր: Այս այցը նաեւ աշխուժացում յառաջացուց էքիմենիք աշխատանքներուն մէջ, որոնց մէջ իր ներդրումը ունի Օքլանտի Հայ համայնքը: (Մանրամասնութիւնները կարդալ Փարոս 63-ի մէջ)

**Կիր., 6 Նոյեմբեր** – ՆՍՕՏՏ Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալութեան 23րդ տարեդարձին առիթով, յընթացս Պատարագի տեղի ունեցաւ Հայրապետական օրհնութիւն:

**Կիր., 6 Նոյեմբեր** – Սրբազան հայրը եւ թեմական խորհուրդի անդամները մասնակցեցան Սուրբ Յարութիւն եկեղեցոյ կազմակերպած տարեկան Քերմեսին: Պսակաձեւ Ժահրի կամ Քովիտի պատճառով երկու տարիէ ի վեր ընդհատուած էր համայնքը համախմբող այս կարեւոր ձեռնարկը: Կարօտը իրենց սրտերուն՝ եկեղեցոյ շրջափակ փութացած էին հազարէ աւելի հայորդիք: Ծխական Խորհուրդի եւ հոգեւոր հովիւ Արժ Տեր Աւետիս Քահանայ Համբարձումեանի հրաւերին ընդառաջած էին նաեւ Դաշնակցային Խորհրդարանի Նորթ Սիտնիի ներկայացուցիչ Քայլի Թինք, Նիւ Սաութ Ուելզի խորհրդարանի անդամ Թիմ Ճէյմս, Ուիլուպի քաղաքապետուհի Թանիա Թէյլըր, քաղաքապետարանի



անդամներ՝ Ճորճի Բուսա, Ճամ Շիա, Բոպըրթ Սամուել, եւ Սարգիս Մուրատեան: Վերջիններս իրենց շնորհակալական խօսքերը կատարելէն բացի մասնակցեցան Հայկական պարերուն, ոգևորուելով եւ ոգևորելով շրջապատը: Իրենց ջբնաղ եւ առիւթնող ձայներով յայտագրին մաս կազմեցին Մաշա Մնջոյեան, Չարլի Չէչէնեան եւ Մայքըլ Ադաբէկեան: Ըստ սովորութեան, Հայկական ամէնօրեայ վարժարաններու աշակերտները Համազգային Գօլստըն Ճեմարանէն եւ ՀԲԸՄ Ալեքսանտր վարժարանէն, Միօրեաներէն՝ Համազգային Թարգմանչաց, Թումանեան, Փափագեան, Հայ Կաթողիկէ Լոյս վարժարանի, Ս. Յարութիւն եկեղեցոյ Կիրակնօրեայ դպրոցի աշակերտները իրենց պարերով, երգերով, արտասանութիւններով ծափահարութիւններ խլեցին հանդիսատեսներէն: Տպաւորիչ պարային ելոյթներով մթնոլորտը ձոխացուցին Համազգային նայիրի եւ Սիտնի Պարի Անսամպլի պարողներն ու պարուհիները:



Սրբազան հայրը անձամբ շնորհակալություն յայտնեց բոլոր մասնակիցներուն, ի միջի այլոց Տիկնանց օժանդակ յանձնախումբին, որոնք հսկայական աշխատանք տարած էին ապահովելու ամեն ինչ որ կարելի էր վաճառել Քերմետի մը ընթացքին, ի գորակցություն Ս. Յարութին Եկեղեցւոյ: Չէր մոռցուած «երեխաներու անկիւն»ը ուր մեծ աշխատանք կը տարուէր զբաղ պահելու մեր փոքրիկները: Փարոսի խմբագրութիւնը կը շնորհատրէ կազմակերպիչ մարմինները, ինչպէս նաեւ հանդիսավարներ՝ Ճորճ Նաճարեանն ու Արամ Ամիրդանը, իրենց հոյակապ հանդիսավարութեան համար:

**Կիր., 6 Նոյեմբեր** – Ընդառաջելով Համազգայինի Գրական Գեղարուեստական Յանձնախումբի հրաւերին, Սրբազան հայրը մասնակցեցաւ կազմակերպուած Գրական Երեկոյին, որ տեղի ունեցաւ Արարատ-Նայիրի Կեդրոնին մէջ՝ Րայտ: Գրական Երեկոյի թեման էր «Իմ Սուրբ Հայրենիք», Հայրենիք հասկացողութիւնը բանաստեղծութեանց եւ արձակ գործերու ընդմէջէն: Ձեռնարկին մասնակիցները, թիով 8, ընթերցեցին արձակ կտորներ եւ բանաստեղծութիւններ, զորս կը թուենք. Աւետիք Իսահակեանի «ՀԱՅՐԵՆԻՔ»-ը, Դերենիկ Դեմիրճեանի «ՀԱՅԸ», Եղիշէ Չարենցի «ԷԼԻ ԳԱՐՈՒՆ ԿԳԱ»-ն, Վահագն Դալթեանի «ՀԱՅՐԵՆԻՔ»-ը, Կարապետ Քիւփէլեանի «ԻՄ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՆԻՔ»-ը, Վահրամ Մավեանի «ԻՄ ՏՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔ»-ը, Եղիվարդի «ՅԱԻԵՐԺԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ»-ը, եւ Յովհաննէս Շիրազի «ԿՏԱԿ»-ը:



Հանդիսավարուհի Տիկին Լիլիք Կոտոյեան իր տեղին միջամտութիւններով եւ յաւելեալ բացատրութիւններով բարձրացուց որակը ձեռնարկին: Քանոնահար Տիկին Լուսիկ Թովմասեան հայկական երաժշտութիւններով յաւելեալ փայլք տուաւ ձեռնարկին:

Ձեռնարկի աւարտին հրաւիրուեցաւ Սրբազան հայրը տալու իր պատգամը: Սրբազանը վերջին տարիներուն Գրական Յանձնախումբի կազմակերպած ձեռնարկներուն բոլորին բերած է իր մասնակցութիւնը եւ քաջալերած բոլոր մը հայուհիները իրենց առաքելութեան մէջ: Ան իր գոհունակութիւնը արտայայտեց այս եզակի ձեռնարկին մտայղացման եւ կազմակերպման համար, մանաւանդ այս օրերուն, երբ Հայրենիքը մեծ մարտահրաւերներու առաջ

կանգնած է: Սրբազանը պատգամեց առանց յուսահատելու կառչած մնալ հայրենի հողին ու միասնական ոգիով տէր կանգնիլ մեր հողին եւ մեր իրաւունքներուն:

Սրբազան հոր աղօթքով փակուեցաւ երեկոն: Սրբազան հայրը իր դրական վկայութիւնը տուաւ Փարոսի խմբագրութեան այս ձեռնարկին մասին, որով խմբագրութիւնս կը քաջալերէ կազմակերպիչները նոյն ոգիով շարունակելու կամակերպել այսօրինակ ձեռնարկներ:

**Բջ 7 Նոյեմբեր**- Սրբազան հայրը նախագահեց Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոնի խնամակալ մարմնի հերթական ժողովին: Ուրախ ենք յայտնելու որ Սիտնիի մէջ ճանչցուած հոգեբուժ Տոքթ Յարութին Ճեպէճեան նշանակուած է խնամակալութեան անդամ: Այսպիսով աւելի՛ եւս արհեստավարժ մարմին կը դառնայ ՀՀԲԿ-ն: Փարոսի խմբագրութիւնը յաջողութիւն կը մաղթէ նորանշանակ Տոքթ Ճեպէճեանին եւ խնամակալ մարմնի անդամներուն:



**Դշ., 9 Նոյեմբեր** – Նախագահությամբ Սրբազան հոր, Առաջնորդարանին մեջ տեղի ունեցավ Խորհրդակցական հանդիպում, որուն մասնակցեցան Հայ յարանուանութեանց հոգեւոր հայրերը, քաղաքական, մշակութային, մարմնամարզական եւ բարեգործ աշխատանքի նուիրուած միութիւններու ներկայացուցիչները: Հանդիպման ընթացքին որոշուեցաւ երեք ամիսը անգամ մը, Առաջնորդարանին մեջ հանդիպիլ խորհրդակցիլ Հայաստանը, Արցախը եւ համայնքը յուզող հարցերով, տեղեակ պահել իրար անցեալի եւ ապագայի գործունէութեանց մասին: Որոշուեցաւ նաեւ պատրաստել ուղենիշ մը քննելի յաջորդ հանդիպման ընթացքին:

**Ուրբ., 11 Նոյեմբեր** – Սրբազան հայրը, ընկերակցութեամբ Թեմական Խորհուրդի ատենապետ Պրն Սարգիս Տէր Պետրոսեանի, Խորհուրդի անդամ Տիար Գեորգ Չափրազեանի, Հայ Եկեղեցոյ Չայն րատիօժամի տնօրէն Տիկին Մարինա Աւագեան-Չափրազեանի, Մելպուրն ժամանեց մասնակցելու համար Սուրբ Աստուածածին եկեղեցոյ 60-ամեակի տօնակատարութեանց: Սիտնիէն, երեցկիներու ընկերակցութեամբ, Մելպուրն ժամանեցին նաեւ Արժանապատիւ քահանայ հայրեր Տէր Աւետիս Համբարձումեան եւ Տէր Միւռն Աւետիսեան, նաեւ Նոր Զելանտայէն Մելպուրն ժամանեց Դիւանապետ Նշան Պասմաճեանը:

**Շբ., 12 Նոյեմբեր** – Երեկոյեան տեղի ունեցաւ Պաշտօնական Ճաշկերոյթ Փարք Բոյալ պանդոկի սրահին մեջ, ներկայութեամբ աւելի քան 250 հայորդուոց եւ հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչներու: Նահանգապետ Տանիէլ Անտրուզը կը ներկայացնէր Նախարար Քոլին Պրոքս (Hon Colin Brooks MP Minister for Disability, Ageing and Carers and Minister for Child Protection and Family Services): Հանդիսավարութիւնը յաջող կերպով վարեց Համազգային Ս. Մեսրոպ Մաշտոց Վարժարանի տնօրէն Բարեշնորհ Գեորգ Սրկ Գոռգեան: Մթնոլորտը խանդավառեց մեծատաղանդ երգչուհի Մաշա Մնջոյեան, որ յատուկ այս առիթով Սիտնիէն ժամանած էր Մելպուրն:




Հանդիսավարը իր բացման խօսքը սկսաւ Թէքէեանի «Եկեղեցին Հայկական»-ի առաջին տունը արտասանելով.

*«Եկեղեցին Հայկական ծննդավայրն է հոգւոյս, Բնչպէս քարայր մ'ընդարձակ, պարզ ու խորհուրդ, մութ ու լոյս, Իր գաւիթովն հիւրընկալ, իր լայն բեմով, ու հեռուն Կանգնած իր լուր խորանով, որ կարծես նաւ մ'է ծփուն»* Ան ըսաւ. «այս տողերով մեր սիրելի բանաստեղծը կը յիշեցնէ թէ աննիւթեղէն արժէքներ կը գտնենք հայ եկեղեցիէն ներս: Աշխարհացրիւ հայը՝ հաւատարիմ իր եկեղեցիին, հոգւոյն ծննդավայրին, հպարտ ու անսասան կ'ապրի, դարերու ընդմեջէն կը դիմագրաւէ բոլոր դժուարութիւնները՝ զինուած իր հաւատքով:

Պահ մը յիշենք բոլոր նուիրեալները, որոնք անշահախնդիր աշխատանքով, անսակարկ նուիրումով եւ անսահման գոհաբերութիւնով Հայ Եկեղեցին զօրացուցին եւ ոչ թէ միայն 60 տարի ոտքի կանգնեցուցին, այլ զայն պայծառացուցին: Դարձան բանաստեղծ Վահան Թէքէեանի տողերուն վկաները:

Այս բացառիկ եւ պատմական օրը Մելայուրնահայութեան եւ Աւստրալահայութեան համար յաղթանակի հանգրուան է, հայու կամքին եւ զոհողութեան արդիւնքն է»:

Հանդիսութեան ընթացքին շնորհահանդէսը եղաւ Armenians in Victoria մեծածաւալ գիրքին, որ հրատարակուած էր այս առիթով: Այս աշխատասիրութիւնը լոյս տեսաւ շնորհիւ անսակարկ եւ տքնաջան աշխատանքին խմբագրական կազմին, յանձինս՝ Արժ Տէր Խաչեր Քահանայ Յարութիւնեանի, Տիարք Սարգիս Մէլեանի, Վահէ Քէթիպի, Աւագ Պետիկեանի եւ Ալեք Խաչոյեանի եւ իրենց 10ի շուրջ օգնականներուն: Գիրքը կը պարունակէ արխիւային նիւթեր եւ աւելի՛ քան 300 լուսանկար: Գիրքի հրատարակութիւնը կատարուեցաւ TC Printing հաստատութեան մէջ նուիրատուութեամբ Պրն Թագուր եւ Շանթ Զիւլլիի, ինչպէս նաեւ Տիկին Թամար Սկրտիչեանի:



Յընթացս հանդիսութեան, ցուցադրուեցաւ վաւերագրական ֆիլմ մը պատրաստուած Մաթիո Քէյսօկլուի եւ Շմաւոն Ազատեանի կողմէ, երաժշտութիւն՝ Վինսընթ Ֆուրֆարոյի (Vincent Furfaro), նկարահանման օգնական՝ Ռուբէն Շահինեան: Պատմութիւնը ներկայացնող՝ ԷՍՊԻԷՍԻ երկար տարիներու խօսնակ՝ Ճորճ Տօնիկեան:

Արժանապատիւ Տէր Խաչեր Քահանայ Յարութիւնեան իր շնորհակալական խօսքը յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց ներդրումը կատարեցին այս բացառիկ տօնակատարութեան յաջողութեան: «Թող Աստուած օրհնէ կազմակերպիչ յանձնախումբը եւ խունկ ու աղօթք բոլոր հիմնադիր անդամներու յիշատակին: Անոնց Եկեղեցի կառուցելու տեսլականին շնորհիւ է որ 60 տարիներ առաջ ունեցանք Մուրբ Աստուածածին եկեղեցին: Անոնք գիտակից էին որ եկեղեցին մեր մխիթարութիւնն էր եւ մեր փրկութիւնը» եզրակացուց քահանայ հայրը: Իր եզրափակիչ խօսքէն ետք Սրբազան հօր աղօթքով փակուեցաւ հանդիսութիւնը: Սրբազան հայրը անդրադարձաւ



էկեղեցույ մղիչ ուժ եւ հոգեկան ապրում ըլլալու հանգամանքին, որ համայնքը ժառանգած է իրենց հայրերէն եւ մեծ հայրերէն: «Դուք պահապանն էք մեր հաւատքին եւ ձեր միասնական ջանքերով եկեղեցին պիտի զօրացնէք, որովհետեւ այնտեղ է որ մեր հայրենիքին եւ հողին ուժը կը զգանք: Մարտահրաւերներ ունի եկեղեցին, որոնցմէ մին է եկեղեցին հասանելի դարձնելը երիտասարդութեան: Եկեղեցին բոլոր հայութեան ծառայութեան կոչուած հաստատութիւն է, ան մեծ ուժ է եւ մեծ զէնք հայապահպան: Հայ եկեղեցին կոչուած է հոգիի պարապը լեցնելու:

Դո՛ւք էք կոչուած լեցնելու այդ պարապը, այլապէս օտա՛րը զայն պիտի լեցնէ: Զանք ըրէք որ մեր եկեղեցին մեր թոռներուն եկեղեցին ըլլայ: Ներկան միասնաբար ապրելով՝ ապագան պիտի կերտենք» եզրակացուց Սրբազան հայրը:



**Վիր., 13 Նոյեմբեր** – Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ 60-ամեակի հանդիսութեան յաջորդ օրը, Սրբազան Հայրը պատարագեց նոյն եկեղեցւոյ մէջ: Սրբազան հօր սպասարկեցին Արժանապատիւ քահանայ հայրեր՝ Տէր Խաչեր, Տէր Աւետիս եւ Տէր Միւռն: Սրբազան հայրը Զուարթնոց դպրաց խումբին եւ Սարկաւագներու ընկերակցութեամբ Հրաշափառով մուտք գործեց եկեղեցի:



Սրբազան հայրը քարոզեց եւ տուաւ օրուան պատգամը հաւատքի ամրութեան մասին: Ան յորդորեց որ հաւատքի ամրութիւնը հաւատքի շարունակականութեան մէջն է: Որպէս ժողովուրդ, դարեր շարունակ կարողացած ենք ամուր պահել մեր հաւատքը եւ դարձած մեր նախնիներուն հարազատ զաւակները: «Այս եկեղեցին վկայութիւնն է մեր 60 տարի առաջուան մեր հայրերուն ունեցած ամուր հաւատքին, եկեղեցի, որ մեզի ժառանգ թողուցին ի զին զոհողութեանց: Անոնք կեանքը վայելեցին կառուցողական աշխատանք տանելով եւ զայն բնաւ չմխայեցին: Անոնք հետեւեցան Պօղոս Առաքեալի խրատին, ուր կ'ըսուի՝ *ինչ որ բարիք պիտի ընես՝ այսօր ըրէ որ ուրախանաս*: Այս կը նշանակէ նաեւ որ ինչ որ բարիք սկսած էք իր աւարտին հասցուցէք, որպէսզի նաեւ ձեր ժառանգորդները ձեզմով ուրախանան եւ դաստիարակուին»: Ապա, խօսելով Ս. Աստուածածին եկեղեցւոյ մասին, Սրբազան հայրը պատգամեց. «այս եկեղեցին միայն քրիստոնէական կեդրոն չէ այլ ան նաեւ ունի ազգային նկարագիր»:

Սրբազան հայրը մաղթեց որ այս եռանդը, սիրոյ գաղափարը, միասնութիւնը որ համայնքը 60-ամեակի առթիւ կը ցուցաբերէ՝ առաքելութիւն դառնան եւ շարունակական բնոյթ ունենան»:



Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդը գեղեցիկ գաղափարը ունեցած էր հրաւիրելու համայն Մելպուրնահայ համայնքը մասնակցելու սիրոյ ճաշի եւ ըմբոշխնելու եկեղեցւոյ Ակինեան Վարժարանի եւ Համագային Մեսրոպ Մաշտոց Մատթոսեան Վարժարանի աշակերտներուն կողմէ պատրաստուած գեղարուեստական ելոյթը: Ահաւասիկ միասնական գործունէութեան գեղեցիկ նմուշ մը, որ կը պարգուէր աւելի քան 200-ի հասնող հանդիսատեսներու առաջ: Բարձրագոյն դասարաններէն մինչեւ մանկապարտեզի ամենէն կրտսերը բաժին առած էին, որոնք իրենց երգերով, պարերով, ընթերցումներով, արտասանութիւններով ոգևորութիւն ստեղծեցին

Սրբազան հօր եւ բոլոր ներկաներուն մօտ: Փարոսի խմբագրութիւնը կը շնորհաւորէ այս միասնական եւ 60-ամեակի ոգիին նոր սերունդին փոխանցման համար տարուած քրիստոնէավայել աշխատանքը:

Նախքան Սրբազան հօր Պահպանիչով հանդիսութեան փակումը, Ծխական խորհուրդը եւ Տէր Խաչեր Armenians in Victoria գիրքէն նուէրներ բաժնեցին Սիտնիէն եւ Նոր Զելանտայէն ժամանած հիւրերուն:

Սրբազան հօր միասնութեան կոչով աւարտեցաւ հանդիսութիւնը:



**Գշ., 15 Նոյեմբեր** – Սրբազան հայրը նախագահեց Թեմական հերթական ժողովին: Ժողովը լսեց Սրբազան հոր ամսական գործունեության ինչպես նաև Սուրբ Յարութին և Սուրբ Երրորդութին եկեղեցիներու հոգևոր հովիներուն Տէր Աւետիս և Տէր Միւռն Քահանայ հայրերուն ամսական գործունեությանը զեկուցումը և իր գնահատանքը արձանագրեց Սրբազան հոր և հոգևոր հայրերուն տարած աշխատանքին՝ հոգևոր և ազգային բնագաւառներու մէջ: Ժողովը նաև որոշեց մօտէն հետեւիլ թեմին ընդհանուր ռազմավարութեան, Հայաստանի մէջ ծնողագուրկ երեխաներու ֆոնտի աշխատանքներուն, Սրբազան հոր եպիսկոպոսական ձեռնադրութեան տասնամեակի նշումի մանրամասնութիւններուն (տես 20 Նոյեմբերի լրատուութիւնը), առցանց լսարանական ձեռնարկներուն, «Առաջնորդարանի Բարեկամներ» ծրագիրին, և այլն:


**Կիր., 20 Նոյեմբեր** – Եւ վերջապէս եկաւ օրը Սրբազան հոր եպիսկոպոսական ձեռնադրութեան և Աւստրալիոյ և Նոր Զելանտայի Թեմին Առաջնորդութեան տասնամեակի նշումին: Պաշտօնական ճաշկերոյթը կազմակերպող յանձնախումբը, յանձինս Տիկնայք Լօրա Արթինեանի, Նորա Պասթաճեանի, Թալին Մարգարեանի և Տիար Նշան Պասաճեանի, Սրբազան հոր և անոր վաստակին վայել



բարձրորակ ծրագիր մը ի գործ դրաւ, որ մեծապէս գնահատուեցաւ 160-ի շուրջ հիւրերուն կողմէ:

Ձեռնարկը տեղի ունեցաւ Միրամար Կարտընզի Լօթուս հանդիսասրահին մէջ: Հրաւիրեալներու շարքին էին Նիւ Սաուրթ Ուելզի նահանգապետ Տոմինիք Փերօթէյի ներկայացուցիչ Մարք Քուրե, որ միեւնոյն ատեն նախարարն է Բազմամշակոյթի և Մեծահասակներու (Minister for Multiculturalism and Minister for Seniors) և որուն սրտի խօսքը անգլերէն լեզուով կարելի է կարդալ էջ 38ի մէջ: Ներկայ էին Ուիլուպիի քաղաքապետուհի Թանիա Թէլլըրը, խորհրդարանի անդամ և Ուիլուպիի ներկայացուցիչ Թիմ Ճէյմսը, Ծերակութեան Փիթըր Փուլտըր, Ուէնթուրթօվիլի քաղաքապետարանի ներկայացուցիչ Պրն Էլմորը, Ուիլուպիի քաղաքապետարանի անդամ Սարգիս Մուրատեանը, Անտիոքեան Ուղղափառ եկեղեցւոյ Մետրոպոլիտ Պասիլիոս Արքեպիսկոպոս Քուտսիյէն, Անկլիքան եկեղեցւոյ Առաջնորդին ներկայացուցիչ Մալքըմ Բիչըրտ Եպիսկոպոսը, Աւստրալիոյ եկեղեցական Խորհուրդի նախագահ Ճոն Կիլմոր Քահանան, ընդհանուր քարտուղարուհի Էլիզապէթ Սթօնը, Նիւ Սաուրթ Ուելզի Էքիմէնիք Խորհուրդի ընդհանուր քարտուղար Շնուտա Մանսուր քահանան, Սիրիաք Ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդի ներկայացուցիչ Նապիլ Քապլօ քահանան, Հայ Կաթողիկէ Համայնքապետ Բարսեղ Ծայրագոյն Վարդապետ Սուսանեանը, Աւետարանական Համայնքապետ Վերապատուելի Յակոբ Սարգիսեանը, Նաեւ՝ Հայ Աւետարանչական Ընկերակցութեան գործադիր տնօրէն Վերապատուելի Գրիգոր Եումուշաքեանը, Ս. Յարութին և Ս. Երրորդութին եկեղեցիներու

հոգևոր հովիներ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան և Տէր Միւռն Քահանայ Աւետիսեան, Աւագ Արժանապատիւ քահանայ հայրեր՝ Նորայր Բաթանեան և Պարթեւ Գարագաշեան, ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Կարպիս Սարեան, Ռամկավար Ազատական Կուսակցութեան ներկայացուցիչ Հայկ Լէփէճեան, ՀՕՄԻ Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Նինա Գաբրիէլեան, Համազգայինի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Ռաֆֆի Շիշոյեան, ՀԲԸՄ Միտնիի ներկայացուցիչ Միհրան Լէփէճեան: Ներկայ էին Թեմական խորհուրդի բոլոր անդամները գլխաւորութեամբ



ատենապետ Սարգիս Տեր Պետրոսեանի, ինչպէս նաեւ եկեղեցական համարեա՝ բոլոր մարմիններուն ներկայացուցիչները: Հանդիսավարութիւնը կատարեց թեմական խորհուրդի ատենադպիր ճոն Մարգարեան:

Յանձնախումբին կողմէ պատրաստուած էր իւրաքանչիւր ներկայի բաժանելի ճաշակաւոր 16 էջոնց գրքոյկ մը, որուն առաջին էջին մէջ տպուած էր Վեհափառ Հայրապետի օրհնութեան գիրը, Թեմական Խորհուրդի սրտի խօսքը եւ Սրբազան հօր տասնամեայ գործունէութեան մասին զեկուցում Հայերէնով եւ Անգլերէնով, ձեռնարկին երաշխաւորներուն անուանացանկը ինչպէս նաեւ յայտագրին մաս կազմող արուեստագէտներուն մասին տեղեկութիւն, ինչպէս նաեւ օրուան յայտագիրը: Գրքոյկը նկարագարուած էր Սրբազան հօր գործունէութեան որպէս վկայութիւն՝ իր եպիսկոպոսական ձեռնադրութենէն մինչեւ օրս:

Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին միջազգային համբաւի տիրացած Սոփրանօ Նաթալի Արոյեանը Կոմիտասի «Չինար ես» եւ Փուշինիի «Վիսսի Տարթէ» երգերով, Չարլի Չէչէնեան եւ Իզապել Մարգարեան կատարեցին «What a Wonderful World»-ը, Չարլի Չէչէնեան նաեւ կատարեց «Come fly with me», «When you wish upon a star» եւ Սրբազան հօր սիրած երգերէն «New York, New York»: Երիտասարդ եւ տաղանդաւոր սաքսոֆոնիսթ Գեորգ Սուրատեան նուագեց Արամ Խաչատուրեանի



«Օրօրոցային»ը: Բոլոր արուեստագէտներուն դաշնամուրով ընկերակցեցաւ, մեծատաղանդ դաշնակահարուհի Տիկին Պեթթիա Գոյումճեան-Բանքին:

Թեմական խորհուրդին կողմէ, անգլերէն լեզուով, սրտի խօսք արտասանեց թեմականի ատենապետ Պրն Սարգիս Տեր Պետրոսեան: (Խօսքը ամբողջութեամբ կարդալ էջ 40): Հանդիսավարը ընթերցեց Ամերիկեան զանազան համալսարաններու դասախօս Դոկտ Փրոֆ Աբրահամ Տէրեանի սրտի խօսքը, զոր փրոֆէսորը այս առիթով ուղարկած էր Ֆրեզնոյէն (տես էջ 42). նաեւ՝ ՆՍ Ուէլյզի խորհրդարանի խօսնակ ճոնաթան Օ՛Տէյի խօսքը: Սրտի խօսք վիտեռերիգարձանագրութիւններ ուղարկած էին Սրբազան հօր գործակիցներ՝ Ս. Էջմիածնի Վատիկանի մօտ ներկայացուցիչ Խաժակ Արք. Պարսամեան, ԱՄՆ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեան, Եկեղեցական Համաշխարհային Խորհուրդի փոխատենապետ Վիգէն Արք. Այբազեան, Մէլքայթ Կաթողիկ համայնքի Աւստրալիոյ եւ ՆԶի Առաջնորդ Բոպրթ Բապայթ եպիսկոպոս ինչպէս նաեւ դաշնակցային խորհրդարանի անդամ Փոլ Ֆլէչրը:







Նախքան հանդիսութեան աւարտը, Սրբազան հայրը, Հայերէնով եւ Անգլերէնով արտասանեց իր սրտի խօսքը, գոր կարելի է կարդալ ստորեւ:

*Նախ շնորհակալ եմ Աստուծոյ Իր այսպիսի խորհրդապահական ձեւով գործելուն համար: Տաս տարի առաջ, այս ամիս, եթէ ինձի ըսէին « դուն Աւստրալիոյ եւ ՆԶ-ի Հայոց թեմին Առաջնորդ պիտի դառնաս» պատասխանս պիտի ըլլար «կատա՛կ կ'ընէք»: Բայց... այդ էր որ պատահեցաւ: Յանկարծ Նորին Սրբութիւնը կանչեց զիս երբ ես Աւստրիա էի որպէս Հայրապետական Պատուիրակ եւ Գերմաներէն սորվելու պայքարին մէջ՝ եւ ըսաւ որ զիս պիտի դրկէր այստեղ ստանձնելու համար հոգելոյս Ադան Արք Պալիօզեանի պաշտօնը:*

*Տաս տարի առաջ...: Տաս տարին երկա՞ր է թէ կարճ, դժուար է թերեւս ըսել...: Այս տաս տարիներուն շատ մը վարչապետներ եկան ու գացին Աւստրալիոյ մէջ, շատ մը նահանգապետեր փոխուեցան, ԱՄՆ-ի շատ մը նախագահներ փոխուեցան, նոյնիսկ Թագուհին վախճանեցաւ...Թէեւ այս բոլորը ինձի հետ կապ չունին, սակայն ըսել կ'ուզեմ թէ տաս տարիները յաճախ երկար են, երբ դէպքեր կը պատահին:*

*Եթէ հարց տրուի թէ այս տաս տարիներուն ի՞նչ գործ ամբողջացուցիր, պիտի ըսեմ որ ես հրաշքներ գործող չեմ, հրաշքը դուք էք, այդ ձեր մէջն է, ձեր սրտերուն եւ հոգիներուն մէջն է: Եթէ բան մը ամբողջացուցի եւ Առաջնորդարանը առաջ գնաց, այդ շնորհիւ ժողովուրդին, յատկապէս թեմական խորհուրդին, եկեղեցական եւ համայնքային մարմիններուն եւ կազմակերպութիւններուն էր: Առանց ձեզի իմ գործս անկարելի է որ յաջողութեան հասնէր եւ մենք այսօր այստեղ հասնէինք...:*

*Առաջին օրէն ես ըսի որ ես Ժողովուրդի՛ն Առաջնորդը պիտի ըլլամ, ձեր մարդը, ձեզի հետ, համեստօրէն պիտի մտիկ ընեմ ձեր կարծիքները: Իսկ երբ սխալ գործեմ, պատրաստ պիտի ըլլամ ձեր ներողամտութիւնը հայցելու: Սակայն երբ հարցը վերաբերի եկեղեցական սկզբունքներու , հաւատքի եւ հայ եկեղեցոյ աւանդութեանց՝ պիտի սանթիմէթը մ'իսկ չզիջիմ: Ես սկզբունքներու տէր անձ մը եղած եմ որպէս տեսուչ, ուսուցիչ, հոգևոր հովիւ եւ հիմա՝ Առաջնորդ: Տաս տարուան մէջ ես իմ սիրտս ձեզի բացի*

եւ լսեցի ձեզ, ձեր հարցերը եւ փորձեցի հասնիլ ձեր կարիքներուն, ուսուցանեցի՝ ծառայութեամբ, քարոզներովս, դասախօսութիւններովս եւ խնդրեցի ձեզմէ իմ ունեցած գիտելիքս օգտագործել ձեր կարիքներուն համար: Տաս տարիներու ընթացքին ես համեստ ծառան էի Աստուծոյ, Իր խօսքը քարոզող եւ հնարաւորինս այդ խօսքը ապրող, անշուշտ կարելիութեանց սահմաններուն մէջ: Ես սուրբ մը չեմ: Ես ձեր նման մէկն եմ, պարզապէս Աստուած ինծի տուած է այս պաշտօնը զոր դուք հաստատած էք, որպէսզի կարենամ ղեկավարել Հայ եկեղեցին հոգեւորականներու, աշխարականներու միջոցաւ եւ դրօշը փոխանցելու համար յաջորդ սերունդին: Ի մօտոյ ժամանակը պիտի գայ իմ դրօշս ալ յանձնելու յաջորդ սերունդին: Պէտք է իմաստուն ըլլալ եւ գիտնալ թէ եկած է ժամանակը: Բոլոր անոնք, որոնք կը կառչին իրենց աթոռին վնաս կը բերեն նախ իրենք իրենց եւ ապա՝ իրենց կազմակերպութեան: Արդ, երբ օր մը ես երթամ եւ դուք զիս յիշելով ըսէք «լաւ ժամանակ ունեցանք իր հետ, լաւ մարդ էր», այդ արդէն բաւարար պիտի ըլլայ ինծի համար...:



Յատուկ շնորհակալութիւն բոլոր հիւրերուն, հոգեւորականներ եւ քաղաքագէտներ: Յատուկ շնորհակալութիւն Թեմական Խորհուրդին, եկեղեցական հայրերուն եւ բոլորիդ անխտիր որ եկած էք: Թող Աստուած օրհնէ ձեզ բոլորդ:

Յոտնկայս ծափահարութիւններով աւարտեցաւ այս անմոռանալի հանդիսութիւնը:







**Դժ., 23 Նոյեմբեր** – Ընդատաջելով Պրօքըն Պեյի Կաթոլիկ Առաջնորդ Անթրնի Բանտացցո Եկիսկոպոսի հրաւերին եւ ընկերակցութեամբ Արժ տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանին եւ Բարեշնորհ Նշան Սրկ Պասմաճեանի, Սրբազան հայրը մասնակցեցաւ «Կարմիր Չորեքշաբթուան» Պատարագին: Կարմիր Չորեքշաբթին աղօթքի եւ յիշելու օր է հալածուած Քրիստոնէաները աշխարհի ամէն կողմ: Սրբազան հօր գլխաւորած խումբը միակ ուղղափառ եկեղեցի ներկայացնող խումբն էր, որուն մասնակցութիւնը մեծապէս գնահատուեցաւ Պատարագիչ Եպիսկոպոսին կողմէ: Չացուուտի Սէյնթ Տօլուրս

տաճարը փութացած էին աւելի քան 300 հաւատացեալներ, մեծաւ մասամբ Կաթոլիկ: Ներկայ էր նաեւ Աւստրալական Եկեղեցիներու Խորհուրդի ընդհանուր քարտուղար Էլիզապէթ Սթոնը:

Բանտացցո եպիսկոպոս, իր քարոզին մէջ, յիշեց իրենց կրօնքին համար հալածեալ ժողովուրդները, որոնց կարգին Հայերը, խնդրեց բարեխղճութիւնը Հօր Աստուծոյ եւ պահանջեց միջազգային ընտանիքէն տէր կանգնիլ քրիստոնէաներու իրաւունքներուն: Ընթացքին նաեւ աղօթք բարձրացուեցաւ Ուքրանիոյ խաղաղութեան եւ Ուքրանացի ժողովուրդին բարօրութեան համար:

Պատարագէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն ընթացքին Եպիսկոպոսն ու տաճարի հոգևոր հովիւ Տէյվիտ Վարդապետը մտերմիկ զրոյց ունեցան իրենց Հայ հիւրերուն հետ:



**Գժ., 29 Նոյեմբեր** – Սրբազան հայրը, ընկերակցութեամբ Նիւ Սաութ Ուելլզ Էքիւմենիք Խորհուրդի վարչութեան անդամ Դիւանապետ Նշան Պասմաճեանի, Փիթ Փողոցի Uniting Church in Australia, Synod of NSW & ACT Rooms-ի մէջ մասնակցեցաւ եկեղեցապետերու եռամսեայ ժողովին, նախագահութեամբ



Խորհուրդի նախագահ Միունկ Հուա Փարք քահանայուհիին: Ժողովի Թեման՝ «Մեր ընդհանուր հետաքրքրութիւնը - Our Common Interest»:

Նախագահը քրիստոնէական սիրոյ մասին խնդրեց արտայայտուիլ եւ գործնական օրինակներ տալ: Շատ ուսանելի կէտեր կային իւրաքանչիւր մասնակցի պատասխանին եւ փորձառութեանց մասին կատարուած վկայութիւններուն մէջ: Մասնակիցները իրար տեղեկացուցին իւրաքանչիւր եկեղեցւոյ մէջ կատարուած գործունէութեան մասին: Մեր եկեղեցւոյ ներկայացուցիչները անդրադարձան զանազան աշխատանքներու ինչպէս Սրբազան հօր եպիսկոպոսական ձեռնադրու-

թեան տասնամեակին, անոր 70-ամեակին, Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ 60-ամեակի հանդիսութիւններուն, լսարանական ձեռնարկներուն, Ադան Սրբազանի վախճանման տասնամեակին նուիրուած ձեռնարկին եւ բազում այլ միջոցառումներու:

Եունայթինկ եկեղեցւոյ Մինոտի առնապէտ Սայմըն Հանսֆորտ քահանան ներկայացուց A reflection on the WCC, “Draft Unity Statement First Revision” նիւթը, որուն ընթացքին ան անդրդարձաւ եկեղեցւոյ տանելիք հսկայ աշխատանքին անարդարութեան դէմ յատկապէս: Ի միջի այլոց ան յիշեց Արցախի եւ Հայաստանի առնչուած անարդար դէպքերը որպէս օրինակ:

Սայմըն Հանսֆորտի ներկայացումէն ետք Շնուտա Մանսուր քահանան ներկայացուց մասնակիցներուն, դէմ առ դէմ թէ առցանց, «Քրիստոսի սէրը եւ եկեղեցւոյ միասնութեան շաղախը եւ ընդհանուր վկայութիւնը» նիւթը- Christ’s love and bond of unity and the church’s common witness:

Քրիստոնէական սիրոյ տարածման անկիւնէն՝ ՆՍ Ուելլզի Էքիւմէնիք Խորհուրդը հսկայական աշխատանք կը ծաւալէ, որ գովելի երեւոյթ է: Ադան Սրբազանի օրերէն մինչեւ օրս մեր եկեղեցին լաւագոյն կը մասնակցի Խորհուրդի գործունէութեան:

Աւարտին, ACT FOR PEACE կազմակերպութեան ներկայացուցիչը կատարեց մեկնարկը Christmas Bowl 2022 ծրագրին: Աւստրալիոյ մէջ Christmas Bowl-ը էքիւմէնիք կոչերուն ամենէն հիններէն մին կը նկատուի, (սկիզբ առած 1949ին): Նախաձեռնողը եղած է Վիքթորիա նահանգէն Հայր Տրանք Պեաթ, օգտակար դառնալու համար Համաշխարհային Բ. Պատերազմէն ճողոպրած գաղթականներու: Անոր առաքելութիւնն է սիրոյ կապ ստեղծել Աւստրալիոյ Քրիստոնէայ համայնքներուն միջեւ ինչպէս նաեւ աշխարհի չորս ծագերուն ապահովութիւն տալու բոլոր անոնց, որոնք բռնի հեռացուած են իրենց տուններէն ընդհարումներու կամ աղէտի պատճառով:

Նուէրները, որոնք կը տրուին Christmas Bowl ծրագրին՝ զօրակցութիւն է տեղւոյն կազմակերպիչ մարմիններուն, որոնք իրենց կարգին իրենց երկիրներէն արմատախիլ անձերուն կը ներշնչեն ապահով շրջապատի մէջ ապրելու զգացումը:



## **Դժ., 30 Նոյեմբեր - Առցանց Դասախօսական Երեկոյ - «Քրիստոնէութեան Դիմագրաւած Մարտահրաւերները Այսօր»**

30 Նոյեմբեր 2022-ի երեկոյեան, Մէլբայթ Կաթոլիկ Եկեղեցւոյ Աւստրալիոյ, Նոր Զելանտայի եւ Ովկիանիոյ Առաջնորդ Գերաշնորհ Գրապըթ Բապպաթ Եպիսկոպոսը դասախօսեց վերոնշեալ նիւթին մասին, 24րդը դասախօսական շարքին, կազմակերպութեամբ Աւստրալիոյ եւ ՆԶ-ի Հայոց Առաջնորդարանին եւ հանդիսավարութեամբ Տիկին Լենա Նազարեանի:

Ո՞վ է Բոպըթ Բապպաթ Եպիսկոպոսը  
Ծնած է Պէրթու 14 Փետրուար 1960-ին:

Ուսումը ստացած է *Collège De La Salle* ի մէջ:

1979ին ԱՄՆի մէջ կը վկայուի որպէս Քիմիագէտ ապա որպէս Մաթեմատիկոս: Ան զանազան ընկերութիւններու մէջ կ'աշխատի որպէս

մասնագէտ ջուրի գտման ճարտարարուեստին մէջ:

1989-ին Լիբանանի Սուրբ Պօղոս Աստուածաբանական համալսարանը կ'ընդունուի եւ 1994-ին կը վկայուի երկու վկայականով մին՝ Փիլիսոփայութեան եւ միւսը՝ Աստուածաբանութեան:

Նոյն տարին ան կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ:

1997-ին Ինտիանայի Փրըտու համալսարանէն մագիստրոսի վկայական կը ստանայ Յարաբերութեանց ճիւղին մէջ: Կը ստանձնէ Սոֆիա Մէլբայթ Թեմական Ամսաբերթի խմբագրապետի պաշտօնը:

2003-ին ան կը նշանակուի Լիբանանի Քրիստոնէական Հեռատեսիլ *Télé-Lumière International* ընկերութեան Խորհուրդի անդամ: *Իսկ 2004-ին՝ Խորհուրդի փոխ նախագահ:*

ԱՄՆի Նորթլէյք քաղաքին մէջ կը տանի Էքիւմէնիք բազմաբնոյթ աշխատանք:

2005-ին ան կը նշանակուի տնօրէն Պօսթընի Cathedral of the Annunciationին, որմէ ետք կը ձեռնադրուի որպէս վարդապետ:

16 Սեպտեմբեր 2011-ին կը ձեռնադրուի Եպիսկոպոս եւ կը նշանակուի Աւստրալիոյ, ՆԶԻ եւ ամբողջ Ովկիանիոյ Առաջնորդ:

Ան անդամ է Աւստրալիոյ Կաթոլիկ Եպիսկոպոսներու Ժողովին եւ հիմնադիր անդամ է եւ Նախագահ Մերձ-Արեւելեան Եկեղեցիներու Համախմբումին:

Դասախօսը անդրադառնալով Կարտիըն թերթին մէջ հրատարակուած յօդուածի մը յայտնեց, որ Մեծն Բրիտանիոյ մէջ տեղի ունեցած մարդահամարի մը ընթացքին, առաջին անգամ ի յայտ եկած է թէ 67 միլիոն բնակիչներու կէսէն պակաս անձիք իրենք զիրենք Քրիստոնէայ կը համարեն, որը 5.5 միլիոն նուազ է քան 2011-ի մարդահամարին յայտարարուած թիւը: Իսլամներու թիւը աւելցած է, իսկ 22 միլիոն անձեր իրենք զիրենք կը համարեն անկրօն:

Ղուկաս 12:35-36-ի մէջ Յիսուս թելադրեց. *«Թող ձեր գօտիները պինդ կապուած ըլլան եւ ճրագները վառած: Եւ դուք նման եղէք մարդոց, որոնք կը սպասեն իրենց տիրոջը, որ երբ ան վերադառնայ հարսանիքէն եւ դուրը թակէ՝ շուտով բանան անոր համար»:* Իսկ 12:54-56-ին մէջ՝



*« Եւ ժողովուրդներուն ալ ըսաւ. Երբոր կը տեսնէք արեւմուտքէն ամպ դուրս կու գայ, շուտով կ'ըսէք. Անձրեւ կու գայ, եւ այնպէս ալ կը պատահի Եւ երբ հարաւային քամին կը փչէ՝ կ'ըսէք, թէ տաք պիտի ըլլայ, եւ այնպէս ալ կը պատահի: Կեղծաւորներ, երկրի եւ երկնքի երեսը զիտէք քննել, հապա ի նչպէս չէք քննել այս ժամանակը»:* Եպիսկոպոսը կեդրոնացաւ երկու հարցի վրայ. ա) Ինչո՞ւ մեր լապտերները վառած չեն եւ բ) Ինչո՞ւ չենք կրնար ներկայի նշանները քննել եւ մեկնաբանել:

Խօսելով մարտահրաւերներու մասին Բապայաթ Եպիսկոպոս կեդրոնացաւ երեք կետերու վրայ.

Առաջին – Մէջբերելով Ճորձ Սանթայանա ամերիկացի-սպանացի փիլիսոփան «Եթէ անցեալը չենք յիշեր ապա դատապարտուած ենք զայն կրկնելու», ան ըսաւ «ի՞նչ պիտի պատահէր եթէ Հայերը մոռնային անցեալը: Ո՞վ կը յիշէ բորոտութիւնը որ անցեալին միլիոնաւոր զոհեր խլեց: Այս օրերուն մենք Սպանական համաճարակը կը յիշենք Քովիտ 19-ի պատճառով, շատ շատեր գաղափար չունէին այս հիւանդութեան մասին, որ տասնեակ միլիոն կեանք խլած էր: Ան խորհրդածեց թէ ինչո՞ւ վայրագութիւններ տեղի ունեցան եւ ի՞նչ կարելի է ընել որ դարձեալ չպատահին: Ի՞նչ ընել որ անցեալի ատելութենէն կարենանք սորվիլ, որ դարձեալ մեր կեանքին մէջ չմտնէ ատելութիւնը:

Երկրորդ - Երկրորդ Մարտահրաւերը թէքնովճի հրապոյրն է եւ իմացութեան վստահելու բացակայութիւնը: Մեծ թէքնովճի ունինք մեր տրամադրութեան ներքեւ, մարդիկ լուսին կրնան երթալ, օդի փոփոխութիւնները կարելի է գուշակել, եւայլն: Սակայն, որեւէ տեղեկութիւն ստանալու եւ անձնական կարծիք կազմելու համար՝ կը վստահինք Կուկըլին: Մենք հրապուրուած ենք ընկերային ցանցերով եւ վստահ չենք բնաւ որ ինչ որ կը կարդանք ճիշդ է թէ սուտ: Յաճախ կը լսենք այն խօսքը, թէ գիտութիւնը ուժ է: Դասախօսը բերաւ օրինակ մը ըսելով, թէ երբ առողջական հարցեր ունիս՝ կը դիմես բժիշկին, որ տարի եւ կը տեղեկանաս հարցին մասին:

Դասախօսը նաեւ շեշտեց թէ նմանապէս, տգիտութիւն կը տիրէ աստուածաշնչեան գիտելիքներուն եւ եկեղեցական սուրբերուն մասին: Երբ ծնողներ կը նստին իրենց զաւակներուն հետ զրուցելու, հազուադէպ անոնք կ'անդրադառնան Սուրբ Գիրքին կամ եկեղեցական հայրերուն:

Յիսուս հրահանգեց իր աշակերտներուն երթալու աշխարհ եւ տարածելու Բարի Լուրը: «Մեր զաւակները ինչպէ՞ս պիտի կարենան բարի լուրը տարածել յաջորդ սերունդներուն եթէ անոնք գաղափար չունին անոր մասին: Տարրական օրինակ մը. պտուղը, որով Եւան խաբուեցաւ օձէն Եդէմի Պարտէզին մէջ...: Յաճախ մարդիկ անվարան կը հաստատեն թէ այդ պտուղը խնձոր էր, սակայն Աստուածաշունչը կը խօսի պտուղի՝ մը մասին, ո՞չ խնձորի: Այսպէս, մարդիկ այսօր կ'ըսեն թէ երեք խնձորներ փոխեցին

աշխարհը – Ծննդոցի մէջ յիշուած խնձորը, Իսահակ Նիւթոնի խնձորը ձգողականութեան տեսութեան առնչուած եւ Սթիւ Ճոպսի խնձորը»:

Յայտնութիւն Յովհաննու-ի 12:9-ին մէջ կ'ըսուի, թէ հին վիշապը, այսինքն սատանան, մոլորեցուց աշխարհը ինչպէս մոլորեցուցած էր Եւան: Հետեւաբար, երբ հրապուրուած ենք որեւէ բանով՝ անոր գերին կը դառնանք:


Բապպաթ եպիսկոպոս բացատրեց թէ մարդիկ կանգնած են երկու ուժերու առաջ, ներքին եւ արտաքին: Ան անդրադարձաւ հոգեւորականներու ինչպէս նաեւ հաւատացեալներու թիւերուն նուազումին: Այս հանգամանքներուն կը նպաստէ նաեւ ընտանիքներու փոքրաթիւ ըլլալու պարագան: Անցեալին, միջին ընտանիք մը կը բաղկանար 8-10 անդամներէ: Ընդհանրապէս, ծնողներ այլեւս իրենց զաւակներուն չեն թելադրեր որ իրենք զիրենք նուիրեն եկեղեցական կամ հոգեւոր կեանքի: Եկեղեցին այսօր պէտք ունի իր համայնքի տաղանդաւոր զաւակներուն: Դժբախտաբար, երբ հարցը կը վերաբերի եկեղեցոյ՝ ժամանակ չենք տրամադրեր անոր, սակայն շատ ժամանակ կը տրամադրենք կարեւոր ժողովի մը որ կապ ունի գործի կամ անձնական շահի հետ: Եպիսկոպոսը հաստատեց որ այդ ընելը սխալ չէ սակայն յստակ է որ ժամանակ եւ ճիգ չի տրամադրուիր եկեղեցոյ: Ան յստակօրէն ըսաւ թէ չենք գիտեր թէ որքան ժամանակ ունինք եւ թէ ե՞րբ գողը պիտի գայ մեր դուռը թակելու: Ան յոյս յայտնեց որ երբ գայ՝ մենք պատրաստ պիտի ըլլանք...

Երրորդ մարտահրաւերը, որուն անդրադարձաւ՝ հաւատացեալներու յարաբերութիւնն էր Յիսուս Քրիստոսի հետ, անոր աղօթելով անձնական աղօթքներ, ոչ արտասանելով տպուած աղօթագիրքերու մէջ: Բապպաթ եպիսկոպոս կոչ ըրաւ եկեղեցոյ մէջ միութեան: Յիշեց Յովհաննու 17:22-ի մէջ յիշատակուածը, ուր կ'ըսուի. «Այն փառքը որ դուն ինձի տուիր, ես անոնց տուի, որպէս զի մէկ ըլլան՝ ինչպէս մենք մէկ ենք»: Այսօր մենք բացուած ենք ամբողջ աշխարհին, խառն ամուսնութիւնները բնական երեւոյթ են, եկեղեցիներու միացումը մեր Տէր Յիսուս Քրիստոսի փափաքն էր: Պէտք է գիտակցիլ որ մենք բոլորս Յիսուս Քրիստոսի ընտանիքէն ենք:

Ան յայտնեց որ մենք կը դիմակայենք Յովհաննու Մկրտիչի մարտահրաւերը: Յովհաննու Մկրտիչ անապատին մէջ աղաղակող ձայն էր եւ մենք կը յիշենք թէ ինչ պատահեցաւ անոր: Թերեւս մենք կը վախնանք ունենալու նման ճակատագիր մը: Ան կեցաւ Հեռովդէս թագաւորին առաջ եւ ըսաւ անոր թէ ինչ որ ան կ'ընէր՝ սխալ էր: Ատոր համար ան գլխատուեցաւ: Ասկէ կը բխի հարց մը, արդե՞՞ք մենք կ'ուզենք ժողովրդային դառնալ թէ հաւատարիմ: Դժբախտաբար մեր մեծամասնութիւնը կը նախընտրէ ժողովրդային ըլլալը:

Բապպաթ եպիսկոպոս հաստատեց թէ որպէս Քրիստոնէաներ մենք չենք զօրակցիր իրարու այնքան՝ որ պէտք է զօրակցիլ: Հարկ է յարաբերութիւն ունենալ Աստուծոյ հետ, որպէսզի Իր ողորմածութեամբ կարենանք մեր ծառայութիւնը առաջարկել մեր շրջանակէն դուրս եւ մատուցենք այն ինչ որ Կայարը (այսինքն աշխարհը) չի կրնար տալ մենակեացներուն, հիւանդներուն, ծերերուն եւ հետապնդուածներուն վրայ գուրգուրալով: Այս կրնայ իրականանանալ երբ Քրիստոնէաներս կը սորթենք մեր թեզանիքները, կ'առաջարկենք մեր տաղանդները եւ կ'ըսենք, եթէ աշխարհը կ'ըսէ «ձախ գացեք» իսկ Յիսուսն ու մեր եկեղեցին կ'ըսեն՝ աջ, ապա մենք ԱՁ կ'երթանք:

Ամփոփելով, Բապպաթ Եպիսկոպոս ակնարկութիւն կատարեց



ներքին մարտահրաւերներու՝ հիմնուած եկեղեցոյ մեզի թելադրած յանձնառութեանց վրայ: Ան նաեւ ակնարկեց աշխարհի արտաքին մարտահրաւերներուն, ընկերային բոլոր բացթողումներուն, որոնց կը զիջինք եկեղեցոյ հիմնական բոլոր սկզբունքները:



Ակնդիրներէն, Տոքթ Արթին Ճէպէճեան անդրադարձաւ հաւատացեալներու Աստուծոյ հետ ունեցած յարաբերութեան եւ անաստուածներու թիւին յաւելումին: Ան խնդրեց դասախօսէն բացատրութիւն տալ Մէլքայթ եկեղեցոյ մասին: Բապպաթ Եպիսկոպոս բացատրեց թէ 451 թուականին կայացած Քաղկեդոնի ժողովին մասնակից եկեղեցիներն էին Ասորի, Ղպտի եւ Եթովպական եկեղեցիները: Քրիստոնէաները որոնք ընդունած էին Քաղկեդոնականութիւնը կը կոչուէին Մէլքայթ: Բառին արմատը Ասորերէն Մէլքն է որ կը նշանակէ Թագաւոր, թագաւորին հետեւորդներ: Բիւզանդիոնի կայսրը այդ ատեն ընդունած էր քաղկեդոնականութիւնը:

Իր սրտի խօսքին մէջ Սրբազան հայրը խորհրդածելով

Բապպաթ Եպիսկոպոսի դասախօսութեան, մարտահրաւերներուն որոնց դէմ յանդիման կը գտնուին հոգեւորականներ, նաեւ անդրադառնալով ծնողներու պատասխանատուութեան, ըսաւ որ հարկ է սերմեր ցանել երեխաներու մտքերուն մէջ, որ պտուղ ստացուի անոնցմէ այլապէս սերունդը պիտի բռնէ կործանումի ճանապարհը: «Ծնողներ իրենց զաւակներուն կուտան ամէն ինչ բացի հոգեւոր զարգացումէն: Մարտահրաւերները շատ են մեր երիտասարդութեան դիմաց, զորս զանոնք կրնան առաջնորդել կործանման» զգուշացուց Սրբազանը: «Մարդիկ կը խօսին փոփոխութեանց մասին, որոնց պէտք է ենթարկուի եկեղեցին, սակայն եկեղեցիներ, անհատներ եւ ընտանիքներ, փոփոխութեան ընթացքին կրնան իրենց պատկանելիութիւնը, Քրիստոսակեղրոն հաւատքը կորսնցնել, եթէ շատ զգուշ չըլլան» եզրակացուց Սրբազանը:



Շնորհակալական խօսքերէն ետք Սրբազան հօր աղօթքով աւարտեցաւ այս շահեկան դասախօսութիւնը:

Ասում են՝ Աստուծո ուղիներն անքննելի են:

Թերես՝ միանշանակ համաձայնվեմ, այս պարզ ճշմարտության հետ, քանի որ հինգ ու կես տարի առաջ, կյանքի բերումով, Միդնէյ ուղևորվելիս, ամենևին չէի կարողանա երևակայել այն ողջ իրադարձությունների զարգացման ընթացքի և արդյունքների մասին, որոնք տեղի ունեցան ինձ հետ՝ Ավստրալիաի հեռավոր մայրցամաքի հորիզոններում:

Բայց նայապէս, մարդկային կենսագրությունը և ճակատագիրը՝ արդյունք են, ներքին ապրումների, անձնական բովանդակության, հավատամքի, երևակայության և սիրո՝ արտահայտված կամքի դրսևորման հանրագումարով:





Եվ երևի թե հենց այս ամենի ցուցիչներից էլնելով էլ, Բարձրյալը կանխորոշեց իմ գործունեության և ծառայության հունն Ավստրալիայում:

Հանգամանքների բերումով, պատիվ ունեցա ստանձնելու Սիդնեյի Հայոց Առաջնորդարանի քարտուղարուհու պաշտոնը, որի շնորհիվ ինձ ընձեռնվեց բացառիկ հնարավորություն, յուրաքանչյուր օր, շփվելու և գործելու Ավստրալիայի և Նոր Զելանդիայի Հայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաջարյանի հետ, ինչը դարձավ իսկապես անկյունաքարային իրողություն իմ՝ արդեն բավական հասուն տարիքում, ձևավորման, աշխարհընկալման և հավատքի գորացման համար:

Ամեն օր աշխատանքի գնալիս, մտածում էի թե որքան երջանիկ մարդ եմ որ շփում ունեմ նման եզակի մարդկաց հետ, ինչպիսիք են՝ արժանապատիվ Տեր Ավետիս Քահանա Համբարձումյանը, Առաջնորդարանի ղիվանապետ պարոն Նշան Բասմաջյանը, Թեմական Խորհրդի ատենապետ պարոն Սարգիս Տեր-Պետրոսյանը, Թեմական խորհրդի փոխնատենապետ պարոն Ստեփան Քրքաշարյանը, Թեմական խորհրդի անդամ պարոն Գևորգ Չափրազյանը, գանձապահ Տիկին Լորա Արթինյանը և այլք:



Նրանցից յուրաքանչյուրը վերին աստիճանի պարկեշտ և պատկառելի հայ մարդու օրինակ դարձան ինձ համար՝ անչափ ազնիվ, լայնախոհ, արդարամիտ և հայ ազգի բաժարձակ նվիրյալի բնութագրով:

Մրբազան Հոր խորախորհուրդ հովհանու ներքո էր նաև, որ իմ հարազատ ընկեր, սարկավագ՝ Պողոս Քելեշյանի և համայնքի շնորհաշատ անհատների միահամուռ ուժերով հաջողեցինք կյանքի կոչելու մի քանի հայանապատ նախախաձեռնություններ, հայ ազգի քրիստոնյա հավատքի, հոգևոր և մշակութային արժեքների շուրջ համախմբելով սիդնեյաբնակ հայ համայնքի ներկայացուցիչներին:

Չեմ կարող նաև չհիշատակել, թե ինչ հոգեզմայլ հրճվանք էր ինձ համար, յուրաքանչյուր հինգշաբթի, ներկա գտնվել Աստվածաշնչի սերտման հանդիպումներին, որոնց մասնակցում էին, անվերջ հոգևոր զարգացման ծարավ ունեցող հրաշալի կանայք, որոնց հարցադրումները և Մրբազան Հոր իմաստուն պատասխաններն ու մեկնությունները, մի ողջ ճանապարհորդություն էին, երկնքի և երկրի աստվածային ճարտարապետության հրաշալիքներով և անբեկանելի ճշմարտության առանցքի շուրջ:

Այդուհանդերձ, ուզում եմ անհատակ երախտագիտությանս խոսքը հայտնել՝ Մրբազան Հոր գլխավորությամբ, բոլոր նրանց, ում հետ շփվելու առիթ և մեծագույն հաճույքը ունեցա Սիդնեյի Հայոց Առաջնորդարանի հյուրընկալ դոնների ներքո՝ անկեղծ սիրո, հոգատար ուշադրության և հարազատ ջերմության մթնոլորտում: Ուստի այդ լուսավոր և թանակագին հիշողությունները և անշեջ հետքն այլևս ընդմիշտ կուղորդեն և կոգեշնչեն ինձ՝ երկնապարզ կյանքիս ողջ ընթացքում:



Աստծո անսպառ ու գթառատ օրհնությունն ընդ ձեզ, հարազատներս:

Լավագույն բարեմաղթանքներով,  
Ձեր Մարիաննա Պողոսյան  
Երևան

## Լուրեր Ծուխերէն


## Ուէնուրըրթվիլ - ՄԻՏՆԻ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի

**Կիրակի, 30 Հոկտեմբերին** Եկեղեցոյս Կիրակնօրեայ դպրոցի աշակերտները, ուսուցչակազմով պտոյտ մը ունեցան դէպի Castelhills Flip out, ազնիւ բարերարութեամբը Տիար Կարօ Գոյուսմճեանին:

**Չորեքշաբթի, 2 Նոյեմբերին** «Ս.Երրորդութիւն» եկեղեցոյ «Կոմիտաս»ի անուան երգչախումբը ելոյթ ունեցաւ կոմիտասեան եւ ազգային երգաշարով մը, Համազգայինի Շրջանային Խորհուրդի կազմակերպած «Պարգեւատրման երեկոյ»ի ձեռնարկին:

**Կիրակի, 6 Նոյեմբերին**, հաւատացեալ ժողովուրդի մասնակցութեամբ, յընթացս Ս. Պատարագին կատարուեցաւ Հայրապետական Մաղթանք՝ ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ամենայն հայոց կաթողիկոսի գահակալութեան 23րդ տարեդարձին առթիւ:

